

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԳԱՆՁՎՈՂ ԽԱՐԱՋԻ ԵՎ ԳԼԽԱՀԱՐԿԻ
ՍԱՍԻՆ, VII—IX ԳԱՐԵՐՈՒՄ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանը արաբական խալիֆայության համակարգում կրել է վերջինիս վարած հարկային քաղաքականության ողջ ծանրությունը: Օմայան խալիֆների ժամանակ, ինչպես ցույց է տրվել հայ պատմագրության մեջ, հարկային բեռը եղել է համեմատաբար տանելի, մինչդեռ Աբբասյանների օրոք խալիֆայությունը, ենթարկվելով իրանական քաղաքակրթության ազդեցության, վերականգնել է Սասանյանների դարաշրջանի հարկային հարաբերությունները և է՛լ ավելի ծանրացրել դրանք: Հայտնի է, որ Հայաստանը նվաճվեց մինչև Օմայանների իշխելը, երբ, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, հարկահանության չափը, ձևերը պայմանավորված էին այն հանգամանքով, թե խալիֆայության գործին ինչ ճանապարհով էր դրավել տվյալ երկրամասը, գենքով, թե նվաճվողի կամովին հնազանդությամբ՝ Ինչաձորի վկայությամբ, 642 թ. Միջագետքը դրավելուց հետո Հարավային Հայաստան ներխուժելիս, Իյադ գորապետին ներկայացավ Վասպուրականի Զալադան (Անձևացիք) գավառի իշխանը և հետո խաղաղություն հաստատեց՝ իր արություններից խալիֆայությանը հարկ տալու պայմանով¹: Արաբ մեկ այլ մատենագիր՝ Աբու-Յուսուֆի հաղորդումներից երևում է, որ գրավված երկրամասերից մեկը դրավում էր խարաջ և գլխահարկ, որի դիմաց դրանց բնակիչների կյանքն ու ինչքը խալիֆայությունը պարտավոր էր պաշտպանել: Այս իմաստով, գրում է հեղինակը, խարաջն ու գլխահարկը հավասարազոր են միմյանց: Ընդամենը դրանք երկուսն էլ ուղարկվում էին բայթ ալ մալ (արքունի դանձարան)²: Որովհետև գլխահարկն ապահովում էր անձի, խարաջը՝ ունեցվածքի անձեռնմխելիությունը, ուստի այս երկու հարկատեսակները Օմայանների օրոք չեն տարբերակվել³, թեև գանձվել են առանձին-առանձին⁴, բայց պարտադիր վերցվել են երկուսն էլ, եթե. իհարկե, հպատակները մահմեդական չէին⁵: Գլխահարկը սկզբնապես կայուն էր, տարբերակումներ չունեի, բայց հետագայում այն գանձվեց ըստ կարողության⁶:

Պետք է կարծել, որ Իյադ գորապետի և Անձևացյաց իշխանի միջև կրկնված պայմանագիրը նախատեսում էր մեկ միասնական հարկի՝ խարաջի և

¹ Baladhuri, The Origins of the Islamic State (Kitab Futūh al-Buldan), vol. I, New York, 1916, էջ 275.

² Abou Yousouf Yakoub, Le Livre de L'impôt foncier (Kitab el-Kharadj), Paris, 1921, էջ 189, 191.

³ P. Hitti, History of the Arabs, London, 1970, էջ 171.

⁴ A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, Bd. I, էջ 161.

⁵ Baladhuri, I, էջ 338.

⁶ Տե՛ս նույն աեղում, էջ 191.

զլխահարկի մուծումը: Այդ համաձայնությունը, հավանաբար, իր ուժը պահպանեց մինչև 652 թ.⁷ Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև կնքված պայմանագիրը: Ընդունված է կարծել, թե զրանով Հայաստանը եռամյա ժամկետով ազատվել է ամեն տեսակ հարկատվությունից: Սակայն խալիֆայության և նվաճված երկրների միջև այդպիսի հարաբերությունը բացառվում էր. անգամ արաբական երկրները նման արտոնություններ չունեին: Ծիշտ է, Սերևոսը հաղորդում է, թե հիշյալ պայմանագրի կետերից մեկի համաձայն Մուավիան հավաստում է, որ «ոչ առնում ի ձեռք սուկ զերբեում մի»⁷, սակայն այս խոսքերի տակ պետք է հասկանալ ոչ թե ապահարկություն, այլ «սակր» կամ արքունի հարկը (զլխահարկն ու խարաջը) զրամով վճարելուց ազատվելը: Սովորաբար արքունի հարկը զրամով էր վերցվում, որպեսզի դյուրությամբ փոխանցվի արքունի գանձարանը: Այս կանոնից իհարկե շեղումներ լինում էին: Տվյալ դեպքում հայերն ազատվելով զրամով վճարվող «սակրից», պարտավոր էին այն մուծել բնամթերքով: Սա երևում է նույն պայմանագրի մեկ այլ կետից, ուր ասված է. «Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անդարեմ»⁸: Անշուշտ, հարկատվության բնամթերային ձևը հարկային բևեռի թեթևացում էր⁹: Այս է պատճառը, որ երբ խալիֆայի մեկ այլ դորապետ՝ Հաբիբ Մասլաման 18 հազարանոց զորքով 654 կամ 655 թ. արշավեց Հայաստան և երբ նրան ներկայացան հլաթի տերը և այլ իշխաններ, ապա Հաբիբը վերահաստատեց ոչ թե Թեոդորոս Ռշտունու կնքած պայմանագիրը, այլ զրանից մեկ տասնամյակ առաջ Իյադի և Անձևացյաց տիրոջ ու այլոց միջև կնքվածը: Սա կատարվեց գանձա-հաստիային (հարկերը զրամական ձևով կորզելու) նկատառումներով: Հաբիբ Մասլամայի հետ պայմանագիր կնքողներից Բելաձորին հիշում է հլաթի և Մոկաց տերերին: Սակայն պատմագրի այն հաղորդումը, թե Հաբիբը բանակել էր Հարքում (Հարակ) և Վարադ ու Սիփան լեռների տորոտներում, ցույց է տալիս, որ նա ներխուժել է նաև Վասպուրական և հարակից գավառներ (դիտելի է նաև այն պարագան, որ Բելաձորին Սոկքը համարում է Վասպուրականի մաս)¹⁰: Այս է պատճառը, որ «նախճավանում (նաշավա) Հաբիբին ներկայացավ Բասֆուրջանի (Վասպուրականի) բատրիկը և նրա հետ պայմանագիր կնքեց՝ իր տմբողջ երկրի ու նահանգի անունից: Այդ պայմանագրով բատրիկը պարտավորվեց ամեն տարի որոշակի չափով հարկ վճարել»¹²: Այս պայմանագիրը կնքողը եղել է Թեոդորոս Ռշտունին: Բելաձորու այս վկայությունը ցույց է տալիս, որ արդեն այդ ժամանակ առկա էր Վասպուրականի քաղաքական տմբողջացում Ռշտունիների մականի ներքո, հետևաբար հարկումը կատարվել է ամբողջ նահանգի համար միասնաբար: Որպես հարկատեսակներ այս շրջանում Բելաձորին հիշում է հիմնականում խարաջը կամ զլխահարկը¹³: Սրանից ոչ թե պետք է հետևեցնել, թե հարկումը կատարել են կամ խարաջի կամ զլխահարկի ձևով, այլ այն, որ զլխահարկի տակ հասկացել են նաև խարաջը և հակառակը, քա-

⁷ «Պատմություն Սերևոսի Լպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, ԼԵ, էջ 224:

⁸ Abou Yousouf Yakoub, էջ 191:

⁹ Սերևոս, ԼԵ, էջ 224:

¹⁰ A. Kremer, նշվ. աշխ., էջ 276—277:

¹¹ Baladhuri, I, էջ 313—314:

¹² Նույն տեղում, էջ 315:

¹³ Նույն տեղում, էջ 313, 315:

նի որ ով տալիս էր գլխահարկ, չէր կարող խուսափել խարաջից, իսկ խարաջը մուծողը պարտավոր էր գլխահարկ վճարել: Նույն շրջանի մասին խոսող մեկ այլ մատենագիր՝ Իբն ալ Ֆակիհը գրում է, որ Հաբիբ Մասլաման հայ հույանականներից վերցնում էր թե՛ գլխահարկ, թե՛ խարաջ¹⁴:

663-ին Մուավիայի հետ Գրիգոր Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու կնքած պայմանագրով, ինչպես հաղորդում է Ղևոնդը, հայ նախարարները պարտավորվում էին ամեն տարի խալիֆայությանը վճարել 500 դահեկան¹⁵: Չնչին հարևանությամբ է և, ինչպես երևում է պատմիչի հաղորդումից, տրվել է դրամով (ոսկով կամ արծաթով): Սակայն նշանակում է արգյոք, թե տվյալ դրամարը բովանդակում էր Հայաստանի վճարած ամբողջ հարկը: Պետք է կարծել, որ այն արտահայտել է միայն դրամով վճարվածը: Մինչդեռ խալիֆայությունը Հայաստանից հարկերը վերցրել է նաև բնամթերքով: Սովորաբար և՛ խարաջը, և՛ գլխահարկը խալիֆայությունում վերցվում էին թե՛ բնավճար և թե՛ դրամական ձևով: Խարաջը և գլխահարկը գանձվում էին զրմամիսներից՝ պայմանագրով նախատեսված չափով¹⁶, բայց խարաջը վերցվում էր նաև մահմեդականների հողերից, եթե դրանք նվաճվել էին ղենքով¹⁷:

Խարաջը և գլխահարկը ունեցել են որոշակի չափ, որն, իհարկե, երբեմն խախտվել է: Հայ մատենագրության մեջ սակ-գլխահարկը երբեմն հիշատակվում է աստվածաշնչյան չափանիշներով: Այսպես, Գրիգոր Նարեկացին գրում է. «Զինդիր չափոյ ծածկելոցն իբր զճշդով պահանջումն սատերն սուկի ի բերանոյ կիտին կորիւնի շորեքդրամեան կշռութեամբ»¹⁸: Անանուն Արծրունին գրում է, որ Սմբատ I-ը հրաժարվեց Ատրպատականի Յուսուֆ ամիրային «տալ զհարկս արքունի, որպէս հրամայեաց տէր զսակ անդրանկացն ի ձեռն Պետրոսի ընծայել այնոցիկ որք զգիրամայն պահանջէին»¹⁹: Երկու դեպքում էլ հեղինակները օգտվել են Ս. Գրիգոր Առաջին ղեպքում սակն ունի շորեքդրամի արժեք, որը համապատասխանում է Սասանյան Իրանում ընդունված գլխահարկի գումարին, իսկ Անանուն Արծրունու մոտ այն համարժեք է երկդրամի («դիդրամ»), որը հին Հռոմում եղել է ըստ շնչի վերցվող գլխահարկի ամենափոքր գումարը: Ուրեմն գլխահարկ-սակը, որպես որոշակի չափ ունեցող հարկատեսակ, համարվել է ավանդական, որից խուսափելն անհնարին էր: Նարեկացու մոտ այն պահանջվում է ի հատուցումն ծածուկ մեղքերի, իսկ Անանուն Արծրունին գտնում է, որ արքունի հարկ (սակ) տալու վերաբերյալ տիրույթ պատվիրանի խախտումը Սմբատ I-ի կողմից, իբր, բերեց «զբազում շարիս ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեանն տեառն»²⁰: Նարեկացու մոտ գլխահարկը (հասը) ծառայության և հպատակության ատրիբուտն է²¹:

14 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане», пер. И. Караулова, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 27; հմմտ. նաև «Արաբական աղբյուրների Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 32:

15 «Ղևոնդեայ Մեծի վարդապետի Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, Գ, էջ 14:

16 A bou Yousouf Yakoub, էջ 95:

17 Նույն տեղում, էջ 95:

18 Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 111:

19 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, Բ, գ, էջ 465:

20 Թովմա Արծրունի, Բ, գ, էջ 466:

21 Գրիգոր Նարեկացի, էջ 360:

Արաբ մատենագիրների մոտ որոշակի վկայություններ են պահպանվել թե՛ խարաջի և թե՛ զլխահարկի մասին: Այսպես, Բելաձորին դրում է, որ յուրաքանչյուր ջարիբ (մոտ 1600 քառակուսի մետր) հողակտորից վերցվում էր խարաջ. եթե խաղողի այգի էր՝ 8 դիրհեմ, ցորենի ցանքսից՝ 4 դիրհեմ, գարու ցանքսից՝ 2 դիրհեմ և այլն²²: Սակայն հաճախ թե՛ խարաջը, թե՛ զլխահարկը գանձվել են կամայականորեն՝ այնքան, որքան կամեցել են տվյալ գավառի, շրջանի կամ համայնքի հարկահանները, անտեսելով նախապես սահմանված չափերը²³: Զենքով գրավված երկրի հողերից խարաջը վերցվել է նախապես սահմանված չափով, իսկ այն հողերը, որոնք պայմանագրով թողնվում էին իրենց տերերին, հաբվում էին տվյալ պայմանագրով նախատեսված չափերով²⁴: Վասպուրականը խարաջ և զլխահարկ վճարել է պայմանագրային հիմունքներով, քանի որ, ինչպես տեսանք, արաբ զորավարի և Վասպուրականի պատրիարքի միջև կնքվել էր պայմանագիր: Խարաջը վերցնելիս առաջին հերթին ի նկատի էր առնվում ստացված բերքը²⁵: Եթե խարաջի ենթակա հողը տարվա մեջ ցանվում էր մե քանի անգամ, ապա խարաջ վերցվում էր յուրաքանչյուր բերքից²⁶: Սակայն այն դեպքում, երբ հողը պիտանի էր, բայց չէր ցանվում, նույնպես ենթակա էր հարկման: Խարաջը պետական գանձարանը լրացնող հիմնական հասույթն էր: Հարկման այս ձևը խալիֆայությունը ժառանգելը Սասանյան իրանից²⁷:

Խարաջի զգալի մասը հաշվվում էր բնատուրքով և ծախսվում գործի ու արքունիքի պետքերի համար: Հալաստանի քաղաքներում օտուր կայազորներ տեղակայելու հետևանքով անհրաժեշտ էր դառնում տեղական բնակչության միջոցներով դրանց կերակրելը, նույնիսկ հանդերձավորելը: Վասպուրականում դա կարճատև եղավ. դրսևորվեց 850-ական թթ., երբ գաղթականական նորանոր խմբեր թափանցեցին այնտեղ: Անդամին քաղաքների բնակիչները նույնպես պարտավոր էին մուծել խարաջ և զլխահարկ²⁸: Խարաջը համարվում էր ամենածանր հարկը, որից ազատ էին միայն Մեդինայի, Մեքքայի, Հեջազի և Եմենի բնակիչները²⁹: Հարկման խարաջային ձևը վնասներ էր հասցնում հողօգտագործման ավանդաբար մշակված կարգին, քանի որ ընդունված սկզբունքի համաձայն, եթե հողատերն իր հողը չէր մշակում, ասենք, մեկ-երկու տարի, ապա դարձյալ պարտավոր էր խարաջ տալ³⁰: Վասպուրականում քննարկվող ժամանակաշրջանում հողամշակման մեջ կիրառվող երկդաշտային և եռադաշտային համակարգի պայմաններում, ինչպես հայտնի է, հողերի մի մասը (կեսը կամ մեկ երրորդը) թողնվում էր անմշակ, որպես բերրիության պահպան: Անմշակ հողերից նույնպես վերցվում էր խարաջ: Նինականը խարաջից ազատվում էր միայն այն դեպքում, երբ նրա կատարած ցանքները

²² Baladhuri, I, էջ 427:

²³ A bou Yousouf Yakoub, էջ 162:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 89:

²⁵ Baladhuri, I, էջ 275:

²⁶ Նույն տեղում, էջ 238:

²⁷ Հմմտ. Н. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков, М.—Л., 1946, էջ 223:

²⁸ Baladhuri, I, էջ 275—276:

²⁹ A bou Yousouf Yakoub, էջ 90—91:

³⁰ Baladhuri, I, էջ 238:

ոչնչացնում էին հեղեղները, կարկուտը, մորեխը և այլ վնասատուներ³¹։ Մահ-մեղականութիւն ընդունած զիմմին հարկվում էր ավելի թեթեւ հարկատեսակով՝ հուշրով³²։ Երբ գրաված երկրամասի բնակիչները փախչում էին, մահ-մեղականները մշակում էին նրանց հողերը, որոնք որպէս իքսաւ բաժանվում էին նրանց միջև³³։

Խալիֆայության գանձարանի օգտին վերցվող մյուս խոշոր հարկատեսակը գլխահարկն էր (ջիզիէ)։ Հայաստանում այն վերցվել է սկզբում ծխահարկի ձևով, իսկ 725 թ. Հերթի աշխարհագրից հետո՝ ամեն մի շնչից։ Ուրեմն թե՛ ծխահարկը, թե՛ գլխահարկը միևնույն հարկի տարբեր ձևերն էին, բայց առաջինը համեմատաբար ավելի տանելի էր։ Հերթը, գրում է Մովսէս Կաղանկատվացին, «էարկ դմարդ և գանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ աշխարհի ծառայութեան»³⁴։ Իսկ Ղևոնդը գրում է, որ Հիշամ խալիֆը «առաքէր զուրն զօրաւար, որում անունն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան...»³⁵։ Այս երկու վկայութիւններից երկուսն է, որ նույն հարկը 725-ից հետո ավելի է ծանրացել, կրել է քանակական փոփոխություն։ 711 թ. անյքերի մասին պատմող մի հիշատակարանից ևս երևում է, որ ծխահարկը համարվում էր գլխահարկ-ջիզիէի տարատեսակը. «Ելին յաշխարհս Հայոց, ի գաւառն Բզնունեաց, եւ գնոյն կոտորումն առնէին։ Ապա զթացեալ Մահմատն արար շաղաւաթ եւ եբարձ զսուրն ի Հայոց։ Եւ արար զնոսա ի կամս սպասաւան զի համարձակ պաշտեսցեն զՔրիստոս Աստուած. եւ տայցեն զճագայն»³⁶։

Հերթի աշխարհագիրը հետևանք էր Օմայանների տնտեսական քաղաքականութեան մեջ կատարվող կտրուկ այն շրջադարձի, որը պայմանավորեց նաև հարկային նոր հարաբերությունների ստեղծումը։ Նույնիսկ Հիշամ խալիֆի նախորդներից Օմարը (717—720) հրաման էր արձակել, ըստ որի ոչ մի մահ-մեղական իրավունք չունենալու Արաբիայից դուրս ձեռք բերելու անշարժ գույք և զբաղվելու երկրագործությամբ³⁷։ Սակայն խալիֆայութեան ֆեոդալական վերնախավի շահերը պահանջում էին տնտեսական նոր միջոցառումներ։ Այդ վերնախավը նվաճումների թուլացման հետ միաժամանակ վերածվում էր ֆեոդալ-կալվածատերերի դասակարգի, որոնք գրեթե Մասանյան արիստոկրատիայի տնտեսական սկզբունքները։ Աբբասյանները շարունակեցին և էլ ավելի խորացրին Հիշամի որդեգրած քաղաքականությունը։ Նրանց օրոք ավելի ուժեղացավ պարսիկ ֆեոդալական վերնախավի ազդեցությունը։ Արաբ արիստոկրատիան կորցրեց իր բացառիկ դիրքը և ստիպված էր իշխանությունն ու նկամուտները կիսել իբրևական խոշոր ֆեոդալների հետ³⁸։ Դրությունն ավելի ծանրացավ, երբ Եգիպտոսն ու սֆրիկյան մյուս երկրները տնկախացան։

³¹ Նույն տեղում, էջ 238։

³² A bon Yousouf Yakoub, էջ 90—91. Baladhuri, I, էջ 114։

³³ Baladhuri, I, էջ 276—277։

³⁴ Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, Գ, Ժէ, էջ 368։

³⁵ Ղևոնդ, Ժէ, էջ 100—101։

³⁶ «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կաղմեց Հ. Տաշյան, Վիեննա, 1895, էջ 59։

³⁷ Sht. A. Мюллер, История ислама. т. I, СПб., 1895, էջ 302։

³⁸ Е. Беляев, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., 1936, էջ 199, 240։

որի հետևանքով հարկային ծանրությունն ընկավ խալիֆայության արևելյան հատվածի վրա (որ էր նաև Հայաստանը): Իհարկե, չպետք է կարծել, որ Հերթի աշխարհագրից առաջ ամենուրեք եղել է ծխահարկ: Աղբյուրներն այլ բան են վկայում: Այսպես, Սերեոսի հավաստմամբ 650-ական թթ. Մարաստանի ամեն մի բնակչից խալիֆայությունը տարեկան վերցնում էր դրամական հարկ³⁹:

725-ի աշխարհագիրը ամենից առաջ գլխահարկի ծանրացում էր: Նույն ընդհանրական հարկի վոխարեն այժմ առանձին-առանձին վերցնում էին գլխահարկ, հողահարկ (խորաջ) և անասնահարկ: Գլխահարկից ազատվում էին միայն կանայք, ծանր հիվանդները, դեռահասները, անաշխատունակ ծերերը՝ Լթե աղքատ էին: Հողեռուականներից (եթե հարուստ էին) նույնպես վերցվում էր գլխահարկ⁴⁰: Մինչև հիշյալ աշխարհագիրը, գլխահարկը կայուն էր, տարբերակումներ չունեին: Սամվել Անեցիին դրում է, որ խալիֆայությունը 640-ական թթ. հայերից՝ «յամենայն տանէ առեալ Գ դրամ և Գ մոթ խորբալ և ձիաւօպրակ մի՝ և պարան մի մաղէ՝ և ձեռնաշար մի: Իսկ ի քահանայից և յաղատաց՝ ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ զհարկն»⁴¹: Նույնը գրեթե բառացի հաստատում է Կիրակոս Գանձակեցին⁴²: Հ. Մանանդյանի հաշվումներով 4 դրամը համարժեք է մոտ 2 ոսկի ուրբու, իսկ 3 մոդ (գրիվ) կամ 29 կգ 376 գ խորբալը (մաղած ցորենը)՝ մոտ 50—100 ոսկու⁴³: Այսպիսով, մինչև 725 թ. աշխարհագիրը Հայաստանում ամեն մի տուն մուծել է ծխահարկ՝ մոտ 50—100 ոսկի: Բելաձորի վկայությամբ 640-ական թթ. յուրաքանչյուր տարի մեկ անձից գլխահարկ էր վերցվում 1 դահեկան դրամով և 3 դահեկան արժողությամբ մթերքով⁴⁴: Գլխահարկը վերցվում էր ըստ կարողության⁴⁵: Հարուստ ունեցվածքի տիրոջից վերցվում էր 48 դիրհեմ, միջինից՝ 24, իսկ աղքատ երկրագործից՝ 12 դիրհեմ⁴⁶: Այն դանձվում էր յուրաքանչյուր տարի, հիմնականում դրամով, — դրում է Աբու Յուսուֆը, — բայց նաև անշարժ և շարժական գույքով, բացառությամբ խոզերի, գինու⁴⁷: Քաղաքաբնակները նույնպես ազատ չէին գլխահարկից: Գլխահարկի դանձումը, փոխանցումը տնօրինում էր խարաջի վային, որն իր գործակալներին ուղարկում էր դավառները, որտեղ նրանք հրահանգում էին գեղջավադներին՝ հավաքել շինականներին և վերցնել անհրաժեշտ հարկագումարը: Գեղջավադներն իրավունք չունեին պակաս ներկայացնել իրենց հեթակա գյուղի բնակչության թիվը և ըստ այդմ էլ նվազեցնել գլխահարկի գումարը, որից պակասում էր նաև խարաջի գումարը⁴⁸: Մինչև 725 թ. խստիվ արգելվել է նաև երդերը (ծխերը) միավորելը, որը նույնպես

39 Սերեոս, Լէ, էջ 239—240:

40 Abou Yousouf Yakoub, էջ 188:

41 «Սամուելի քահանայի Անեցոյ Հատրմունը ի գրոց պատմադրաց», Վաղարշապատ, 1893, էջ 82:

42 Տէ՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 60:

43 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ մոդովրդի պատմության, հատ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 212:

44 Baladhuri, I, էջ 270—271, 276:

45 նույն տեղում, էջ 191:

46 Abou Yousouf Yakoub, էջ 187, 190:

47 նույն տեղում, էջ 187:

48 նույն տեղում, էջ 190:

արվում էր գլխահարկը նվազեցնելու նպատակով: Արգելվում էր սակ երդերը մասնատելը, որն ավելացնում էր գլխահարկը⁴⁹:

Խալիֆայությունը, նրա գործակալները գիտակցում էին, որ իրենք մեծապես կարող են շահել այն դեպքում, երբ ոչ թե ոչնչացնեն նվաճված երկրների բնակիչներին, այլ նրանցից վերցնեն գլխահարկ, խարաջ և դրա փոխարեն նրանց թողնեն ունեցվածքը, շխեն նրանց կանանց, երեխաներին: Թուլլատրվում էր նույնիսկ հեռանալ երկրից, բայց մնալու դեպքում անսպաժան վճարելու էին գլխահարկ և խարաջ: Միաժամանակ նրանք հասկանում էին, որ հպատակ բնակչությանը հլու հնազանդ պահելու համար անհրաժեշտ էր սիրաշահել: Աբու-Յուսուֆը գրում է, որ խալիֆայության պաշտոնյաները, զորքը պարտավոր էին պահպանել զիմմիների հետ կնքած այսլմանագիրը. կովել հանուն իրենց հպատակների, ինչպես նաև շահրել նրանց կառողությունից վեր հարկերով⁵⁰: Արգելվում էր նաև գլխահարկը հավաքելիս կոտորել կամ մարմնական պատիժների ենթարկել զիմմիներին, բայց նախատեսվում էր բանտարկություն⁵¹: Գլխահարկը դիտվում էր որպես ամենածանր ու ստորացուցիչ հարկը: Մխիթար Գոշը եկամտահարկը գերադասում է հարկման մյուս ձևերից և հատկապես գլխահարկից, որից քրիստոնյաները պետք է ազատ լինեին, իսկ ալլակրոնները՝ ոչ⁵²: Գլխահարկը միաժամանակ ամենամասնավոր հարկն էր: Այն նույնիսկ արտացոլում է գտել «Սասնա ծռերում»⁵³: Գլխահարկը և խարաջը, գրում է XI դարի արաբ մատենագիր Ալ-Մավերդին, սրբալնագործված, մահմեդականներին անտեղծ շնորհված պարգև են՝ անհավատներից ամեն տարի հասույթներ կորզելու համար⁵⁴:

Հայ մատենագիրները գլխահարկը [«հարկ ըստ գլխոյ» (Ղևոնդ), «Ըստ մարդաթուի» (Ասողիկ), «Մարդահարկ» (Ղևոնդ)] համարում էին կատարյալ չարիք: Նրանք ըստ երևույթին հաս-ի և սակ-ի տակ ի նկատի էն ունեցել գլխահարկը, արքունի հարկի տակ՝ խարաջը: Բայց որովհետև թե խարաջը և թե գլխահարկը հայ մատենագիրները դիտել են որպես նույնաբնույթ հարկատեսակներ, ուստի երբեմն այս երկուսը միասին արտահայտվել են նաև միևնույն «արքունի հարկ», «արքունի սակ» կամ «արքունի հաս» արտահայտություներով: Ն. Աղանցի կարծիքով սակ-ի տակ պետք է հասկանալ միայն խարաջը⁵⁵, իսկ Հ. Մանանդյանի կարծիքով՝ գլխահարկը⁵⁶:

Սակ-ը որպես հարկատեսակ, գոյություն է ունեցել նաև մարգարայության շրջանում: Ի տեղի, Սասանյան պահլավական դատաստանագրքում այն ունի «հարկ» իմաստը⁵⁷: Գլխահարկի՝ հիմնական հարկ լինելու հանգամանքն ինքնին հայ մատենագիրներին հիմք է տվել նրա փոխարեն գործածել ավելի լայն իմաստ ունեցող սակ տերմինը: Նույնը կարելի է ասել նաև խարաջի մասին:

⁴⁹ Baladhuri, I, էջ 316—317:

⁵⁰ Abou Yousouf Yakoub, էջ 191:

⁵¹ Նույն տեղում, էջ 189:

⁵² Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությանը և թորոսյանի, Երևան, 1975, էջ 31:

⁵³ Տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Բ, առաջին մաս, Երևան, 1944, էջ 218 և հտ.:

⁵⁴ «Православный Палестинский сборник», т. XVII, вып. 2 (4), СПб., 1897, էջ 1229:

⁵⁵ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 482:

⁵⁶ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 105:

⁵⁷ А. Периханян, Сасанидский судебник. «Книга тысячи судебных решений», Ереван, 1973, էջ 386, 390:

Մյուս կողմից, ինչպես երևում է մատենագիրների վկայություններից, 725 թ. Ետո զլխահարկի իմաստ է ունեցել ոչ միայն սակր, այլև հասր: Մինչև 725 թ. զլխահարկ-սակի համեմատաբար թեթև լինելը հետևանք էր այն պարագայի, որ հայոց այրուծիու ոռճիկը հանվում էր հայերի մուծած հարկադրումներից: Երբ այդպիսով նվազեցվում էր Թեոդորոս Ռշտունու և Մուսվիհայի միջև կրեք-ված պայմանագրի համաձայն, ինչպես հայտնի է, հայոց այրուծին ստանալու էր ոռճիկ, որը սակայն դալիս էր ոչ թե խալիֆայի գանձարանից, այլ պահվում էր հայերի վճարած սակ-ից՝ զլխահարկից ու խարաջից: Երբ Ղևոնդը գրում է, թե Աբդլա (Աբդալլահ) ոստիկանի օրոք (740-ական թթ.) «հատալ սակ արծաթոյն, որ պայր ամի ամի յարքունուստ գօրացն Հայոց»⁵⁸, ապա դրա տակ պետք է հասկանալ այն, որ ամենամյա ոռճիկը, որ պահվում էր հայոց մուծած արքունի հարկերից, այլևս գոյություն չուներ, ուստի, եզրափակում է պատմիչը, «զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն. և հարկ լինէր ի սանդ իւրեանց հանդերձել գլուխս գօրացն և զրնթացս զրաւաւտակ աշխատութեանցն ողջ պահել»⁵⁹:

Հայ իշխանները, որպես խալիֆայի հպատակներ, իրենց այրուծիով պարտավոր էին ծառայել նրան: Ուստի նրանք իրավացիորեն անարդարացի էին համարում ոռճիկը վերացնելը և հաճախ հրաժարվում զլխահարկի ու խարաջի այն մասը վճարելուց, որը կազմելու էր ոռճիկը, նույնիսկ դիմում էին ասպտամբություն: Սակայն աստիճանաբար հարկային բեռը աճում էր, բնակչությունը ենթարկվում հարստահարման, բռնադատումների: Արծաթի բաղադրությունն պատճառով հարկատուները ի վիճակի չէին մուծել զլխահարկ և խարաջ, ուստի խալիֆայի հարկահանները զրամի դիմաց մարդ էին պահանջում, ինչպես գրում է Ղևոնդը, «զլուխս արանց»⁶⁰: Եվ որովհետև թե՛ զլխահարկը և թե՛ խարաջը վերցվում էին բոլոր կարողության, ուստի նախարարներից ավելի շատ էր պահանջում: Բայց դա ծանրանում էր դարձյալ ոամիկների ուսերին: Հենց ոամիկներից կորդած հասույթներից էր, որ նախարարները տալիս էին խալիֆայությանը «բնծայս ձիոց ջորոց և հանդերձից պատուակահաց և զայլ մթերս ոսկուց և արծաթս»⁶¹: Հայ նախարարները նույնպես չէին դիմանում հարկերի ուժից վեր ծանրությանը՝ «ոչ կարէին յայնժամ այնպիսի նեղութեան տանել»⁶²:

Անտանելի հարկի պատճառով էր, որ Վասպուրականի Գաղիկ Արծրունի իշխանը 740-ական թթ. բնդդիմանալով խալիֆայի հարկահաններին, ամրացավ նկան ամրացում, հավաքեց մյուս նախարարներին և «էլեալ տսպատակ սփոէր զկողմամբ Ատրպատական աշխարհին»⁶³: Հենց իր այրուծիու կարիքների, ինչպես և պահանջվող «սակը» վճարելու համար Գաղիկը Ատրպատականի, Պարսկահայքի՝ Վասպուրականին սահմանամերձ գավառների բնակչությանը հարկման է ենթարկում, սակայն խալիֆայի զորապետ Ռուհը հարձակվում և պարտություն է մատնում նրան, ներխուժում Վասպուրական, բայց չի կարողանում զրավել նկան ամրացը, ոչտեղ պաշարված էր Գաղիկը: Վեր-

58 Ղևոնդ, ԻԸ, էջ 128:

59 Նույն տեղում, էջ 128—129:

60 Նույն տեղում, ԻԲ, էջ 135—136:

61 Նույն տեղում, ԻԸ, էջ 128:

62 Նույն տեղում, ԻԲ, էջ 133:

63 Նույն տեղում, էջ 133—134:

չինիս զեմ ուղարկվում է մեկ այլ զորամաս՝ Մուսեի գլխավորությամբ, որը ամբողջ մեկ տարի պաշարելուց հետո զավթվեց ձերբակալում ու բանտ է նստում Կադիկին և «պահանջեր ի նմանը պարծաթին, զոր հարկապահանջութեամբ ժողովեալ էր յերկրէն պարսից»⁶⁴: 774—775 թթ. ապստամբությունը նույնպես ուղղված էր առաջին հերթին ծանր հարկերի դեմ: Այս է պատճառը, որ բարսեամբ նախարարներին միանում են նաև ուսմիկները⁶⁵: Ուշագրքով է, որ Վասպուրականի ապստամբները շարժվում են Արճեշի վրա՝ «բռնել զնա ի հիմանց և զգորսն որ ի նմա՝ հարկանել սրով»⁶⁶: Սա ոչ միայն այն պատճառով, որ Արճեշը խալիֆայության ռազմական հենակետերից էր, այլև հարկային գործի կազմակերպման կենտրոն էր, որը, հավանաբար, հավաքվում էին հարկային գումարները և փոխանցվում Սամառա: խալիֆայությունում ծայրերկրների հարկային գործի կենտրոնները միաժամանակ կատարում էին նաև պետական գանձարանի դեր՝ հավաքված հարկային եկամուտներով հոգում էին փարշական, զինվորական ու պետական այլապի ծախսերը, որոնց գումարը մասհանվում էր հավաքված հարկից. որից հետո վերջինս փոխանցվում էր խալիֆայի արքունական գանձարանը⁶⁷: Արճեշից կարող էր փոխանցվել նաև հայոց այրուձիու բռնիկը: Ապստամբների պայքարի հետևանք էր, անշուշտ, նաև այս իրողությունը: Արճեշի՝ հարկային գործի կենտրոն լինելու պատճառով էր նաև, որ խալիֆայի Ամր զորավետը հենց այդ քաղաքի մոտ զորքով դարանամուտ եղավ, որպեսզի ամեն ղեկով այն պաշտպանի ապստամբներից. և կարողացավ պարտության մատնել նրանց⁶⁸: Նմանօրինակ դեր ունեւ նաև Բաղեշը, որը նույնպես (IX դ. կեսերին) հայերը ջանացին գրավել, բայց ձեռքից թաք թողնեցին հարմար պահը⁶⁹, ուստի քաղաքը այնպես էլ չմտավ ո՛չ Բագրատունիների և ո՛չ էլ Արծրունիների թագավորությունների մեջ: Նույնը կարելի է ասել նաև Գարինի մասին:

849 թ. Վասպուրականի և Տարոնի ղեմ հարկահանության պատրվակով ռազմի ելած Ապուսեթին հայ իշխանները տալիս են «զհարկս և հասս արքունի»⁷⁰: «Հարկերի հազարապետ» Ալա Մովսիսին նույն ժամանակ ներխուժելով Վասպուրական, մնաց այնտեղ «զօրօք բազմօք, մինչև զբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն առ նա բերցեն»⁷¹: Ինչպես տեսնում ենք, պատմիչը որոշակիորեն տարբերում է «զհարկս»՝ խարաջը և «զհասս», այսինքն՝ գլխահարկը: Մյուս կողմից ուշագրավ է այն պարագան, որ գլխահարկն ու խարաջը հիշվում են միասին: Պատճառը ոչ միայն այն էր, որ այդ երկուսն էլ կարևոր հարկատեսակներ էին (ուստի երկուսն էլ ունեն «արքունի» վերադիրը և հաճախ հիշվում են նույն՝ «արքունի հատկ» անվան տակ), այլև այն, որ խալիֆայությունը խարաջն ու գլխահարկը արագ և միատեղ հավաքելու նպատակով այդ երկու հարկատեսակները պահանջում էր միաժամանակ:

⁶⁴ Նույն տեղում, էջ 134:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 138—139, 142:

⁶⁶ Նույն տեղում, էջ 146:

⁶⁷ А. Мец, Мусульманский Ревенсанс, М., 1973, էջ 100:

⁶⁸ Ղևոնդ, էջ 146—147:

⁶⁹ Թովմա Արծրունի, Բ, գ, էջ 187—188:

⁷⁰ Նույն տեղում, Բ, Լ, էջ 183:

⁷¹ Նույն տեղում, Բ, գ, էջ 189:

Աբբապետաների օրոք թե՛ զլիսահարկն ու խարաջը և թե՛ մյուս հարկերը հավաքվում էին կանոնավոր կերպով: Առաջնորդվում էին սովորաբար իրանական օրացույցով և ըստ այդմ էլ հարկումն սկսում պարսից ամսնորից: IX դարից խալիֆաները փորձեցին հաստատել հարկային նոր տարի: 857-ին նույնպես խալիֆան հարկերի գումման սկիզբ սահմանեց հունիսի 17-ը, իսկ Մուլադիդը 894-ին որոշեց հարկային նոր տարին սկսել հուլիսի 1-ից⁷²: Հայաստանը բացառությամբ չէր կազմում, ուստի այնտեղ հարկահանություն համար ուղարկված զորքերը իրենց արշավները կատարում էին սովորաբար դարնանր, իսկ 857-ից հետո՝ հավանաբար ամռանը, որպեսզի ավելի հեշտ լինեին հավաքվող բերքից հարկերը գանձելու:

Վասպուրական և Տարոն ներխուժելիս Ապուսեթի համար լավագույն պատրվակը արքունի հարկի՝ խարաջի և զլիսահարկի գանձումն էր, որի համար Ապուսեթի դրածո Ալա Մովսիսին, մտնելով Աղբակ, «ասպատակ սփռելը կողմանս կողմանս յերեկոն Վասպուրական, գերիներ, աւերներ, յափշտակներ, կապուտ կողոպուտ դործէր ընչից և ստացուածոց. յափշտակէին դայր և լկին և զժառանգութիւն նոցա»⁷³: Ուշագրավ է պատմագրի մեկ այլ վկայությունը, ուր ասվում է, որ Մովսիսին «առնէր ասպատակ և ի կողմն Անձաւացնաց տէրութեանն, և անտի ևս առնուին աւար ի պատճառս ոռճկաց պիտոյից այրուծիոյն»⁷⁴: Ուրեմն Մովսիսիի պատժարշավի նպատակն է եղել «ոռճկաց պիտոյից այրուծիոյն», որի տակ, հավանաբար, պետք է հասկանալ հայերի վնասած զլիսահարկի և խարաջի այն մասը, որը պիտի թողնվեր իրենց՝ որպես այրուծիու ոռճիկ, բայց պահանջվում էր: Հայերը իրավացիորեն հրաժարվում էին այն վնասելուց, քանի որ հայոց այրուծին խալիֆային ծառայող զորամիավորում էր: Հայ իշխանները հաճախ կատարում էին իրենց սյուզերենի՝ խալիֆայի պաշտպաններին հրահանգները, նրբեմն մեկնում նրանց մոտ և ընկնում լաբում՝ որոգայթը: Օրինակ՝ Տարոնի տեղեկը Բագրատ Բագրատունին, ենթարկվելով Յուսուֆի հրավերին, մեկնեց նրա մոտ «տիրասէր խորհրդովք Լատուրէլ զսպաս գինուորութեան, ... ըստ թագաւորական հրամանին»⁷⁵:

Հայ իշխանները օրինական էին համարում այն վիճակը, երբ ծառայելով խալիֆային, վարձատրվում էին արքունիքից ստացվող ոռճիկով, որի նշանակությունը թե՛ բարոյական էր և թե՛ նյութական: Թեև այն հանվում էր իրենց մուծած հարկերից, բայց դա ևս օրինական էին համարում, քանի որ բրիտոնյաներ էին, հետևաբար պիտի մուծեին զլիսահարկ և խարաջ: Արքունի հարկի՝ այրուծիու ոռճիկ տրվելիք մասը հայ իշխանները ամեն կերպ ջանում էին չմուծել, իսկ մնացած հիմնական մասը մուծում էին՝ որպես հարկային պարտավորություն: Ուստի Աշոտ Արծրունին Մովսիսին ուղարկած իր հրովարտակում գրում է. «Անք քանդի ոչ երբէք ստունգանեցաք հրամանի թագաւորին և ոչ խափանիչ դտաք հարկաց արքունի, իբրև դապստամբս և դանհապանդո և զստահակս ի ծառայութենէ տէրանց», միաժամանակ խոստանալով տալ արքունի հարկի պահանջվող մասը՝ «դհասս հարկացն», միայն թե նու վերջ տա ասպատակությանը⁷⁶: Սակայն այս անգամ արդեն խալիֆա-

72 Ա. Մեւ, նշվ. աշխ., էջ 99:

73 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ն ի, Բ, ո, էջ 189:

74 Նույն տեղում:

75 Նույն տեղում, էջ 199:

76 Նույն տեղում, էջ 189:

յության նպատակները ավելի հեռուն էին գնում. այն է՝ հայոց իշխանների ինքնավար իրավունքների վերացում: Դրա համար անհրաժեշտ էր ուռաջին հերթին այրուծի ու վերացումը: Հետագայում ատյանում մեղադրելով հայ իշխաններին, խալիֆան ուսում է նրանց. «Ձօրս գումարէիք, այրուծի կողմէիք, մարտս և պատերազմունս գրգռէիք», ինչպես նաև՝ «հարկացն եզելոց խափանիչք լինէիք»⁷⁷: Ուրեմն հայերն այրուծի կողմէի ու իրավունք չունեին:

Վասպուրականի այրուծին նյութակալն միջոցներից պրկելու նպատակով էր, որ Ծովադին մտավ Աղբակ, որտեղ էր Արծրունիների տոհմական ուստան Աղամակերտը՝ գանձարանով, Իհարկե որոշակի զեր ուներ և այն, որ Աղբակը մոտ էր նաև Պարսկահայքին և Ատրպատականին, որտեղից արշավել էր Ծովադին և ուր կարող էր նահանջել ու փրկվել՝ անհրաժեշտության դեպքում: Սակայն նրան չհաջողվեւ հափշտակել Արծրունիների գանձը շնորհիվ այն հանգամանքի, որ Աշոտ Արծրունին նույն «ընտիր հեծելովք այրուծիոյ» (որը վերացնել էր կամենում խալիֆան) ջարդեց Ծովափի զորքը: Սակայն Արծրունի բոլոր իշխանները չէ, որ զենքի զիմեցին: Վասակ Արծրունին, օրինակ, «պանձ բազում ի կարաս թաքուցեալ ի գետնափեր տան, ի ներքոյ դրացն ապարանից տան իւրոյ», երկյուղում էր, թե հարկահանները կհայտնաբերեն իր տանը տեղավորված «զպահեստ գանձին»⁷⁸: Մեկ տարի հետո Յուսուֆը Ծովափի պես Ատրպատականից ներխուժեց Աղբակ և բանակեց Աղամակերտում, որտեղից սուպատակներ սփռելով, սկսեց «աւար առնել, կուտել առ ինքն ղկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ», իհարկե, դարձյալ արքունի հարկերի ոլտաճառով⁷⁹: Միաժամանակ Յուսուֆը կամենում էր նշանակել «ի վերայ աշխարհիս գործաւորս», որոնք Վասպուրականում և այլուր պետք է հաստատեին խալիֆայության սահմանած կարգերը: Հայ նախարարներին, սրպես երկրի բնիկ տերերի, փոխարինելու էին մահմեդական պաշտոնյաները, որոնց խալիֆան հրահանգել էր, թե «ձեր լիցի երկիրն այն ի ժառանգութիւն»⁸⁰: Այս ամենին զեռ անտեղյակ էր Աշոտ Արծրունին, երբ Յուսուֆին ուղարկած հրովարտակում գրում էր, թե խալիֆաների սկզբունքն է հոգ տանել երկրի մասին, որպեսզի այն շենանա, բնակչությունն աճի, որով և «հարկ արքունի կանգուն երթիցեն», միաժամանակ հավաստիացնելով, թե համաձայն է «մտերմութեամբ ծառայել և փութով մեծաւ կատարել զհրամայեալսն ի րէն»⁸¹: Վասպուրականցիներին չեղոքացնելու միտումով Յուսուֆն ասիպված միաժամանակ հետաձգեց Վասպուրականի սուպատակումը, մանավանդ որ իր նախորդները չարաչար պարտվել էին նման փորձ կատարելիս: Եվ նա «կամէր անսուլ ժամու գիպողագունի գի որսայցեն նենգութեամբ խաբել»⁸²:

Խալիֆայության որդեգրած նոր քաղաքականությունը ամեն կերպ իրականացնելու նպատակով 852 թ. Հայաստան արշավեց Բուղա զորապետը, որը ոչ միայն նվաճող էր, այլև զաղութացնող, ուստի Վասպուրականի իշխանները խոստանում են նրան «կնքել և տալ» ոչ միայն արքունի հարկը, այլև «գեօղս

⁷⁷ Նույն տեղում, Գ, դ, էջ 256:

⁷⁸ Նույն տեղում, Ե, դ, էջ 191:

⁷⁹ Նույն տեղում, էջ 197:

⁸⁰ Նույն տեղում, Գ, ա, էջ 210:

⁸¹ Նույն տեղում, Բ, դ, էջ 197—198:

⁸² Նույն տեղում, էջ 198:

և «սգարակս»⁸³, այսինքն կալվածներ, իրենց իրավունքները հարգելու պայմանով: Սակայն Բուղան զրանով էլ չբավարարվեց: Վասպուրականի այն իշխաններին, որոնց հաջողվեց թափարդը պեկ, առանց որևէ վերապահության հերոսության տարավ: Բուղայի հաջորդ քայլը մահմեդական ցեղերի բնակեցնելն էր Վասպուրականում⁸⁴, որով միայն հնարավոր կլիներ նահանգը հնազանդեցնել խալիֆային: Այն ոհմտե Բուղան Հայաստանի վրա կարգեց «ղեկբույժ ոմն և չղեաց զնա հաղարապետ հայոց, և վերակացու ի վերայ հարկաց արքունի և տիրել փոխանակ իշխանաց սորա»⁸⁵: Այսպիսով, զլխահարկի և խարաջի հավաքումն այսուհետև վերապահվում էր ոչ թե հայ իշխաններին, այլ՝ Բերաճիմին, որը տիրելու էր Հայաստանին նաև քաղաքականության ճիշտ է, Արլան լիճ հովտում կենտրոնացած Վասպուրականի գործի հրամանատար Գուրգենին Բուղան ստիպված եղավ մի պահ խոստանալ (մոլորեցնելու նպատակով) թե, իբր, նրան ճանաչում է Վասպուրականի տիրակալ, եթե պիտանար և խարաջ մուծի կամ, ինչպես պատմիչն է ասում՝ «ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց»⁸⁶: Այստեղ «հարկն» ու «սակը» համարվում են խալիֆայությունում ավանդաբար ընդունված, որոշակի չափանշանող հարկատեսակներ: «Հասս չափոյ սակի» դարձվածը ցույց է տալիս, որ Գուրգենից պահանջվող պիտանարկ-հասր վերցվելու էր խալիֆայությունում բնդունված զլխահարկի (սակի) չափով: Սրանից երևում է, որ հասր և սակը նույն զլխահարկն է, առաջինը, հավանորեն, տարբերակված, ավելադիր մասերով, երկրորդը՝ խալիֆայությունում ավանդաբար ընդունված չափով:

Հայ մատենագիրների մոտ «արքունի հարկ», «արքունի հաս, սակ» արտահայտությունները բնավ չեն նշանակում, թե հայերից վերցվել է միայն զլխահարկ և խարաջ: Նախ հարկ և հաս բառերը մեծ մասամբ օգտագործված են խոսքի ձևով: Ուստի պետք է կարծել, որ թե՛ «հարկ», թե՛ «հաս» և թե՛ «սակ» տերմիններն ունեն ոչ միայն խարաջի և զլխահարկի, այլև մյուս հարկատեսակների իմաստ: Աբբասյանների օրոք վերցվում էին ոչ միայն զլխահարկ և խարաջ, այլև ինքն այլ տեսակի հարկեր⁸⁷, որոնցից, անշուշտ, Հայաստանը չէր կարող անցնել: Սակայն զլխահարկն ու խարաջը, լինելով հիմնական հարկատեսակներ, որոնք ընդունված էին ավանդաբար, սրբազործված դարձան, որոշակի պայմաններում դառնում էին նաև ընդհանրական հարկատեսակներ: Բայց, ինչպես տեսանք, հայ նախարարները անհրաժեշտության դեպքում տալիս էին նաև զինվորական ուժ, այսինքն ծառայություն կուտարում: Ընդամենը «հարկ» և «սակ» տերմինները գործածվել են նաև ծառայություն իմաստով: Սյուրբենին ծառայելը կոչվել է «զհարկ ծառայութեան», «զհնապանդութեան հարկ»⁸⁸: Մեկաց տեղը «բազում յարդարէր ընծայէր զսակ

⁸³ Նույն տեղում, Գ, Բ, էջ 222:

⁸⁴ Նույն տեղում, Գ, Ե, էջ 251:

⁸⁵ Նույն տեղում, Գ, ժա, էջ 311:

⁸⁶ Նույն տեղում, Գ, դ, էջ 238:

⁸⁷ Ա. Кременер, նշվ. աշխ., էջ 278: Քննարկվող ժամանակաշրջանում հայերի վճարած հարկերի մասին տե՛ս Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար («Գիտական աշխատությունների ժողովածու: Նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակին», Երևան, 1941): Ս. Սելիբ-Բախչյան, Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1968: Ա. Տեր-Ղևոնդյան, Բնահարկը արաբական ժամանակաշրջանում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. պիտ.), 1969, N 2:

⁸⁸ Թոմաս Արծրունի, Գ, իր, էջ 379, իդ, էջ 351:

հարկի ծառայությունն առաջի Դավակյ»⁸⁹։ Սմբատ I-ը Յուսուֆի հանդեպ կատարում էր «զսակ սովորական ծառայություն»⁹⁰։ Զորքով սյուդերենի դրոշի ներքո կոչվելը կոչվել է «պատերազմական հարկ»⁹¹։

Հարկի թեթևացման նպատակ էր հետապնդում նվիրատվությունը։ Այսպես, 740-ական թթ. հայ նախարարները խալիֆայությանը տալիս են «ընծայա ձիուդ, ջորուդ և հանդերձից պատուականաց և գալլ մթերս ոսկուդ և արծաթոյ, որպես զի կարասցեն լնուլ զբերան վիշապին»⁹²։ Դրասխանակերտցին գրում է, որ Յուսուֆ ամիրան, ստանալով Սմբատ I-ի նվերները, «թնթևարեն զսակն արքունի արարեալ»⁹³։ Ուրեմն նվերների շնորհիվ «արքունի սակը» թեթևացվել է։ Ընդամենը պատմիչը «արքունի սակի» տակ, ինչպես Թովմա Արծրունին՝ «արքունի հարկի» տակ, ի նկատի ունի խարաչը և գլխահարկը։ Ընծայման ձևով արքունի հարկի մուծումը Դրասխանակերտցին համարում է «զպարսոս մտերմական սակին»⁹⁴։ Նույն պատմագրի մոտ «արքունի հարկի» իմաստ ունի նաև «բեկար արքունի» տերմինը։ Խալիֆայի հրամանով Հայաստան ուղարկված Ալի Արմանի ոստիկանը Աշոտ Բագրատունուն իշխանաց-իշխան նշանակելով, նրան է վստահում «զսակ հայոց և ամենայն բեկար արքունի»⁹⁵։ Հ. Մանանդյանի կարծիքով բեկարն ունեցել է հողահարկի իմաստով⁹⁶։ Իհարկե, բեկար հիմնականում նշանակել է խարաչ-հողահարկ, բայց ավելի լայն առումով նշանակել է «հարկ, տերությանը վճարված տուրք»⁹⁷։ Դրասխանակերտցին Թովմա Արծրունու «զհարկս արքունի և զսակս հորջորջումների փոխարեն զործածում է «զսակս հայոց և բեկար արքունի» ձևերը, որոնց հետ երբեմն նաև ռմաքս» բառը։ Այսպես, պատմիչը գրում է, որ Սմբատ I-ը իր տերության հպատակներին «ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ...»⁹⁸։ «Մաքսի» տակ նա նկատի ունի մաքսատներից վերցվող տուրքը, որպիսին Աբբասյանների օրոք իսկապես որ էղել է⁹⁹։ Ավիշին ամիրայի ժամանակ Սմբատ I-ը կարողացավ «զսակ արքունի հարկաց և մաքսից» նվազեցնել¹⁰⁰։ Անկախ թագավորություն եղած շրջանում Վասպուրականը նույնպես արքունի հարկ էր մուծում։ Վասպուրականի թագավորության ստեղծումից հետո Մուկիթադիր խալիֆան թագ ուղարկեց Դադիկին «և յանձն առնէ նմա զհարկս արքունի»¹⁰¹։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ հարկ վճարելու հարցերում նախարարական ինքնավարությունները և տեղական թագավորությունները միմյանցից զրեթե չեն տարբերվել։

89 «Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 292։

90 Նույն տեղում, էջ 210։

91 Թովմա Արծրունի, Գ, իթ, էջ 413։

92 Ղևոնդ, ԻԸ, էջ 128։

93 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 193։

94 Նույն տեղում, էջ 212։

95 Նույն տեղում, էջ 160։

96 ՏԵՄ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 160։

97 Հ. Ամառյան, Արմատական բառարան, հատ. I, Երևան, 1971, էջ 437։

98 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 162։

99 ՏԵՄ Ա. Kremer, նշվ. աշխ., էջ 278։

100 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 160։

101 Թովմա Արծրունի, Գ, գ, էջ 468։

О ХАРАДЖЕ И ПОДУШНОЙ ПОДАТИ В ВАСПУРАКАНЕ В VII—IX вв.

В. М. ВАРДАНЫАН

(Резюме)

Размеры и формы налогообложения населения Васпуракана в пределах Арабского халифата были обусловлены прежде всего тем, как осуществлялось войсками халифа завоевание данного края — силой оружия или мирными средствами. По свидетельству Беладзори, в 642 г., когда войска халифата во главе с Иядом вторглись в южную Армению, к последнему явился князь области Андзевацик («Завазан») и заключил договор, обязуясь платить халифату налог, который включал как харадж, так и подушную подать. По договору, заключенному в 625 г. между Теодоросом Рштуни и Муавием, армяне не освобождались от уплаты налога (на три года), но могли платить его продовольствием, что облегчало налоговое бремя. Товма Арцруни и другие историографы называют подушную подать «хас» («հաս») и «сак» («սակ»). Однако эти термины часто обозначали налог вообще. Иногда харадж и подушная подать рассматривались как один налог и назывались «придворным налогом» («արքունի հարկ») или «придворным саком» («արքունի սակ»).